Արմավիր համայնքի 2023 թվականի փորձի ներկայացում

Մասնակցային բյուջետավարման գործընթացների վերաբերյալ

«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ
Անի Թովմասյան

2022 թվականին Արմավիր խոշորացված համայնքը միացավ **Տեղական բաց կառավարման գործընկերության** (ԲԿԳ) հարթակին՝

- ինստիտուցիոնալացնելու մասնակցությունը
- խթանելու բաց կառավարումն ու լավ կառավարումը տեղական մակարդակում:

Գործողությունների 1-ին ծրագրով ամրագրվեց երկու հանձնառություն, որոնցից մեկը **Մասնակցային բյուջետավարումն** էր:



«Համայնքային բյուջետավորում ժողովրդի կողմից, ժողովրդի համար» ծրագիր

Ծրագրի **նպատակն** է.

Արմավիր խոշորացված համայնքում ամրապնդել մասնակցային ժողովրդավարությունը և խթանել քաղաքացիների ներգրավվածությունը տեղական որոշումների կայացման գործընթացներում՝ մասնակցային բյուջետավորման համակարգի ներդրման միջոցով:

Ծրագրային **գործողությունները**.

- Բարձրացնել հանրային իրազեկությունը մասնակցային բյուջետավորման վերաբերյալ՝ որպես տեղական որոշումների կայացման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը խթանելու միջոց (օնլայն/օֆլայն)
- Զարգացնել ՏԻՄ աշխատակազմի, համայնքի, ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների կարողությունները քաղաքացիների արդյունավետ ներգրավվածության համար:
- Խթանել քաղաքացիների ներգրավվածությունը բյուջետավորման գործընթացի որոշումների կայացման գործում: (3 Town Hall հանդիպում)

Արդյունքում

- Կայքում գրանցված և նույնականացված մոտ **600** օգտատեր
- Հաղթահարված է մասնակցության նվազագույն՝ 1%-ի շեմը (քվեարկության ավարտ՝ մարտի 15)
- Գործընթացում ներգրաված են եղել խոշորացված համայնքի **4** բնակավայրի բնակիչներ.
  - Արմավիր
  - Մյասնիկյան
  - Սարդարապատ
  - Լուկաշին
- Գրանցվածները աշխատակիցներ են.
  - **21** ՀՈԱԿ-ների
  - Արմավիրի Արվեստի պետական քոլեջի
  - Արմավիրի Տարածաշրջանային պետական քոլեջի

Շնորհակալություն

Մեր հասցեն. ք. Արմավիր,
Շահումյան 68ա
Հեռ. (0237)2 3034
Կայք: www.armavirdc.org